ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«07» մարտի 2022թ. № 28-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2004թ. ապրիլի 22-ի «ՔՊ պլանների մշակման կարգը սահմանելու մասին» թիվ 633-Ն որոշման 1-ին գլխի 2-րդ կետը՝

որոշում եմ.

1. Հաստատել Լոռի Բերդ համայնքի «Քաղաքացիական պաշտպանության պլան»-ը, համաձայն հավելվածի.

1) ՀՀ Լոռի Բերդ համայնքի քաղաքացիական պաշտպանության վիճակի հիմնական ցուցանիշները՝ համաձայն թիվ 1 հավելվածի,

2) ՀՀ Լոռի Բերդ համայնքի տարածքում հնարավոր իրավիճակի և բացատրագիր պլանը՝ համաձայն թիվ 2 հավելվածի,

3) ՀՀ Լոռի Բերդ համայնքի տարածքի քիմիապես վտանգավոր օբյեկտների վերաբերյալ տվյալները՝ համաձայն թիվ 3 հավելվածի,

4) ՀՀ Լոռի Բերդ համայնքի ՔՊ ղեկավար կազմի կառավարման, կապի և ազդարարման սխեման՝ համաձայն թիվ 4 հավելվածի,

5) «Բարձր» և «Լրիվ» պատրաստականության աշխատակարգի միջոցառումների ցանկը՝ համաձայն թիվ 5 հավելվածի,

6) ՀՀ Լոռի Բերդ համայնքի քաղաքացիական պաշտպանության հետախուզության և բացատրագիր պլանը՝ համաձայն թիվ 6 հավելվածի,

7) ՀՀ Լոռի Բերդ համայնքի բնակչության անհատական պաշտպանության միջոցներով ապահովման հաշվարկը՝ համաձայն թիվ 7 հավելվածի,

8) ՀՀ Լոռի Բերդ համայնքի բնակչության պատսպարման հաշվարկը՝ համաձայն թիվ 8 հավելվածի,

9) ՀՀ Լոռի Բերդ համայնքի բնակչության տարահանման հաշվարկը՝ համաձայն թիվ 9 հավելվածի,

10) ՀՀ Լոռի Բերդ համայնքի քաղաքացիական պաշտպանության ուժերի և միջոցների հաշվարկը՝ համաձայն թիվ 10 հավելվածի,

11) Կապի միջոցների հաշվարկը՝ համաձայն թիվ 11 հավելվածի,

12) Ինժեներական ապահովման տեխնիկայի հաշվարկը՝ համաձայն թիվ 12 հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով հավելվածները հաստատվում են երեք տարի ժամկետով:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

2022թ. մարտի 07
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 07 » մարտի 2022թ. № 29-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 06-044-0016-0011 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387- Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ գյուղի 06-044-0016-0011 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ Անդրանիկի փողոց, թիվ 18 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ

2022թ. մարտի 07
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 14 » մարտի 2022թ. № 30-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒՌՈՒՏ ԳՅՈՒՂԻ 06-105-0018-0016 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ՈՒռուտ գյուղի 06-105-0018-0016 ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. ՈՒռուտ, 1-ին փողոց, թիվ 22 փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

2022թ. մարտի 14
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberd.lori@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

« 15 » մարտի 2022թ. № 31-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու հերթական նիստ 2022 թվականի մարտի 22-ին ժամը 11:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով համաձայն՝ հավելվածի:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ

2022թ. մարտի 15
գ. Լոռի Բերդ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Անցկացման վայրը. Լոռի Բերդի համայնքապետարան

Անցկացման ժամանակը. 22.03.2022թ. ժամը 11:00-ին

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսքը:

1. 1. Գումարել Լոռի Բերդ համայնքի ավագանու նիստ 2022թ. մարտի 22-ին ժամը 11:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանում՝ հետևյալ օրակարգով.

1) Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 22-ի նիստի օրակարգի հաստատում:

(Զեկուցող՝ Ա. Ներսիսյան)

2) Լոռի Բերդ համայնքի 2022 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

(Զեկուցող՝ Մ. Հովսեփյան)

3) Լոռի Բերդ համայնքի դպրոցի աշակերտներին և դասավանդող ուսուցիչներին՝ մարզային օլիմպիադային մասնակցելու համար՝ համայնքի 2022 թվականի բյուջեից դրամական մրցանակ տրամադրելու վերաբերյալ

(Զեկուցող՝ Ա. Մարտիրոսյան)

4) Լոռի Բերդ համայնքի բնակիչներին սոցիալական օգնություն տրամադրելու վերաբերյալ

(Զեկուցող՝ Ա. Մարտիրոսյան)

5) «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի ավագանու 2017թ. դեկտեմբերի 27-ի թիվ 14-Ա որոշման հավելվածում փոփոխություններ կատարելու վերաբերյալ

(Զեկուցող՝ Ա. Մարտիրոսյան)

6) Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրում գտնվող 13-րդ փողոց, 1 շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը Հայաստանի Հանրապետությանը տրամադրելու վերաբերյալ

(Զեկուցող՝ Ք. Մելիքջանյան)

7) Գյուղատնտեսական նշանակության ցածրարժեք հողատեսքն -ավելի բարձրարժեք հողատեսքի՝ գյուղատնտեսական նշանակության պտղատու այգու փոխադրելու վերաբերյալ

(Զեկուցող՝ Ք. Մելիքջանյան)

8) Լոռի Բերդ համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու վերաբերյալ:

(Զեկուցող՝ Ք. Մելիքջանյան)

2. Ելույթներ, առաջարկություններ:

3. Նիստի փակում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**